ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԱՔԿ-22/1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Մետաղանիշի տրամագիծը 50 մմ է, հաստությունը 1,5 մմ և պատրաստվում է պղնձի հատուկ համաձուլվածքից: Այն անցնում է գալվանական մշակում և լաքապատվում է: Մետաղանիշի դիմերեսին պատկերված է ՀՀ քննչական կոմիտեի ռելիեֆային խորհրդանիշը, որի տարրերն են երկու արծիվները, վահանը (երկու խաչաձևված աչքերի տեսքով), կնգումի (հայկական կզաքիսի) մորթին և կաղնու տերևները: Խորհրդանիշի ոսկեգույնով երիզված շրջանակաձև կենտրոնում երկու արծիվները պահում են խաչված աչքերի գծապատկերով ոսկեգույնով երիզված վահանը՝ պատված կնգումի (հայկական կզաքիսի) մորթիով: Արտաքին շրջանակաձև շերտում ոսկեգույն հայերեն տառերով գրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ»: Ընդհանուր շրջանը երիզում է Հայաստանի Հանրապետության եռագույն դրոշը, որի գունավորումները կատարվում են համապատասխան գույնի ոսկերչական էմալներով: Խորհրդանիշի կենտրոնական մասում, օվալի մեջ դաջվում է ծառայողի անհատականացման համարը: Մետաղանիշը դարձերեսի կողմից ունի պտուտակային ամրակ՝ կաշվե ներդիրին ամրանալու համար: Մետաղանիշի միանմանությունը և չափսերի բարձր ճշտությունը ապահովելու համար դրանք պատրաստվում են դրոշման ճանապարհով և թվային տեխնոլոգիաների կիրառմամբ: Մետաղանիշի դարձերեսին դրոշմման եղանակով դաջվում է արտադրողի ապրանքային նշանը: Ապրանքի նմուշը պետք է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԱՔԿ-22/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	